

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Սպորտ հնսայթ ՍՊԸ-ն ԵԶ-ԷԱՃԱՊՁԲ-23/50 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Արտաքին չափերը՝ ստատիկ դիրքում Երկարություն, մմ (±20 մմ) 1418 Լայնություն, մմ (±20 մմ) 588 Բարձրություն, մմ (±20 մմ) 1624 Կառուցվածքը Անկերային բոլտ՝ 4 հատ Հիմք հենակ՝ 1 հատ Բռնակ՝ 4 հատ Նստատեղ 2 հատ Բակային մարգասարքը պետք է լինի ամուր կառուցվածք, որն ապահովի բացօթյա տարածքում անվտանգ սպորտի զբաղվելու հնարավորություն: Կառուցվածքը պետք է լինի բարձր հակահարվածային և հակատատանումային: Հագուստի և մարմնի մասերի վնասվածքներից խուսափելու համար մարգասարքը պետք է նախագծված և արտադրված լինի ГОСТ Р 57538-2017-ի պահանջներին համապատասխան կամ համարժեք: Մարգասարքը անկերային բոլտերով պետք է ամրանա բետոնապատ տարածքին, բոլոր բոլտերը անվտանգության տեսանկյունից ելնելով պետք է փակվեն պլաստիկ փականներով: Մարգասարքը պետք է լինի հակավանդալային: Կառուցվածքում օգտագործվող խողովակների դուրս ցցված և հասանելի ծայրերը, եթե այդպիսիք կան, պետք է փակվեն պլաստիկ հակավանդալային խցաններով: Կառույցի բոլոր մետաղական մասերը պետք է ներկված լինեն պոլիմերային փոշու Էմալով, ինչը կանխում է մետաղի կոռոզիան: Անկերային բոլտերը պետք է լինեն ցինկապատ: Մարգասարքը պետք է հագեցած լինի տեղեկատվական ցուցանակով, որը պետք է պարունակի տեղեկատվություն արտադրողի, արտադրության ամսվա և տարվա, արտադրանքի նշանակման, մարզվողի տարիքային, քաշային և հասակի սահմանափակումների մասին: Մարգասարքի հիմքի նկարագիրը Հիմքը բաղկացած է լինում հարթակից և թիթեղներից: Ամբողջ կառուցվածքն իրար միացված է լինում պողպատե 6x12 գամերով: Պլատֆորմը պատրաստված է 4 (±2 մմ) հաստությամբ պողպատե թիթեղից: Պլատֆորմի չափերը ծովելուց հետո 701x260 (±20</p>

մմ) -ից ոչ պակաս են: Պլատֆորմի վրա կան անցքեր 617x200 մմ (± 20 մմ) հեռավորության վրա: Առջևի վերին մակերեսի վրա անցքեր են արվում 32(± 10 մմ) տրամագծով, ստորին մակերևույթի վրա՝ 17(± 10 մմ) տրամագծով: Պլատֆորմի ընդհանուր բարձրությունը 123 (± 15 մմ)-ից ոչ պակաս է, որը բաղկացած է 40 (± 10 մմ) ընդհանուր հարթակից և չորս կողերից, որոնք թեքված են դեպի վեր: Կողերը ունեն 10(± 2 մմ) անցքեր: Հիմքի ընդհանուր չափերը 701x260x1506 (± 20 մմ) են: Հենակ - բռնակների նկարագիրը Բռնակը իրենից ենթադրում է խողովակից և թիթեղից զոդված կառուցվածք: Բռնակի հիմքը հանդիսանում է խողովակը, որի դիամետրը չպետք է պակաս լինի 48մմ, իսկ խողովակի պատի հաստությունը չպետք է պակաս լինի 3(± 1 մմ), երկարությունը՝ 750(± 20 մմ)-ից ոչ պակաս: Առաջին ուղիղ հատվածը 80(± 10 մմ) է, հետո կորանում է, կորությունը պետք է լինի 90աստիճան: Խողովակում արված են 9(± 1 մմ) -անոց անցքեր արմունկակալների ամրացման համար: Բռնակին եռակցված է 146x108 (± 20 մմ) չափսերով եզր՝ պատրաստված 6(± 1 մմ) հաստությամբ մետաղական թերթիկից: Կցաշուրթն ունի 4 անցք՝ 120 մմ և 84 (± 20 մմ) կենտրոնական հեռավորությունների վրա: Բռնակի ծալքավոր հատվածի կողքին եռակցվում է 25-26,8 մմ տրամագծով խողովակի հատված, 2,8(± 1 մմ) պատի հաստությամբ և 118(± 10 մմ) երկարությամբ, խողովակի մի ծայրը ծալված է մինչև կեսը: Խողովակի հատվածը եռակցվում է խողովակի ծալքավոր հարթակից մինչև խողովակի առանցքը առնվազն 129 (± 10 մմ) հեռավորության վրա: Հենակի ընդհանուր չափը 705x210x232 (± 20 մմ) է: Մարգասարքի նստատեղը պետք է պատրաստված լինի պլաստմասից, կլորացված անկյուններով և կտրված եզրերով տրապեզոիդ ձևավորում: Նստատեղերի չափերը 269x330 (± 20 մմ) -ից ոչ պակաս, 22-24,5 մմ-ից ոչ պակաս բարձրությամբ: Վերին առջևի մակերեսի կլորացման շառավիղը ստորինին անցնելու ժամանակ 20 (± 2 մմ) է, ստորին եզրի կլորացման շառավիղը՝ առնվազն 3(± 1 մմ) : Նստատեղերի կլորացման շառավիղները անկյուններում՝ 30(± 5 մմ): Նստատեղի առջևի մակերեսը ունի 0,2-0,5 մմ բարձրության վրա ցցված հատուկ նախշ, որը թույլ է տալիս մարգասարքի վրա մարզվողի հարմարավետ և կայուն դիրքը: Նստատեղի կառուցվածքն ապահովված է 4 հատ M8 հեղյուս, որոնք ներկառուցված են նստատեղի կառուցվածքի մեջ և պատրաստվում են նստատեղի արտադրության ժամանակ ձուլման միջոցով: Հեղյուսները տեղակայված են նստատեղի լայնության և երկարության վրա, համապատասխանաբար, 133 և 164 (± 10 մմ) հեռավորությունների վրա: Անկերային հեղյուսը 12(± 2 մմ) տրամագծով պողպատե շրջանակից պատրաստված արտադրանք է, 60 (± 10 մմ) մմ երկարությամբ պարուրավոր մասով: Խարիսխի պտուտակը ծռված վիճակում՝ 300 (± 20 մմ) չափսերով և 50(± 10 մմ) թեքված մասով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Спорт Инсайт в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕР-ЕЦДЦПДР-23/50 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	